«ԱՆԴՐԵԱՍ ԱԳՈՒԼԵՑՈՒ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ» ԵՎ ՆՐԱ ՀԵՂԻՆԱԿԸ

Կ. Հ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Մաշտոցի անվան Մատենադարանի վերջերս տպագրած ձեռագրերի երկհատոր համառոտ ցուցակից տեղեկանում ենք, որ № 784 ձեռագրում (էջ 383ա—384բ) պահպանվել է Անդրեաս քահանայի վկայաբանությունը՝ Դավիթ եպիսկոպոսի հեղինակությամբ։ Վկայաբանությունում խոսվում է Անդրեաս քահանա Ագուլեցու նահատակության և նրա կենսագրության հետ կապված առանձին դեպքերի մասին։

Անդրեասը ծնվել է Նախիջևանում։ Երբ Շահ Աբաս I-ի 1604 թ. արշավանքի ժամանակ ավերվել էր նաև այդ քաղաքը, նրա ծնողները փախել էին Ագուլիս։ Այնուհետև Անդրեասն ուսում է ստացել Սյունյաց Մեծ անապատում, Մովսես Տաթևացու մոտ։ Ուսանելուց հետո դասավանդել է Ագուլիսում։

Օսմանցիների Օքուզ Ահմեդ փաշայի դեմ արշավելու ժամանակ Շահ Աբասը մտել է Ագուլիս. ամբողջ ժողովուրդը, ինչպես և Անդրեաս քահանան իր աշակերտներով մեծ ընդունելություն են ցույց տվել շահին։ Աշակերտների մազերը, սակայն, խուզած-տգեղացրած են եղել։ Շահը կռահել է, որ դա դիտմամբ է արվել, որպեսզի աշակերտները տգեղանան և ինքը չկարողանա նրանցից գեղեցիկներին ընտրել։ Ուստի հրամայել է պատժել նրանց, ովքեր պատճառ են եղել աշակերտների մազերը խուզելուն։ Անդրեաս երեցը մտածելով, որ բազմաթիվ ծնողներ պետք է սպանվեն, հանցանքն իր վրա է վերցրել։ Շահը հրամայել է բանտարկել և չարաչար տանջել նրան՝ մղելով հավատափոխության։ Անդրեաս երեցը, մնալով իր համոզմունքին, ահավոր տանջանքներով նահատակվել է 1617 թ. նոյեմբերի 18-ին։ Այս բովանդակությունը հիմնական գծերով կրկնված է Առաքել Դավրիժեցու «Պատմության» Իէ գլխում, ուր այն խորագրված է՝ «Վասն նահատակութեան տէր Անդրէաս քահանային»։ Դավրիժեցին «Պատմությունը» սկսել և ավարտել է 1651—1662 թթ., իր կյանքի վերջին շրջանում։

Հ. Աճառյանը և Հ. Մանանդյանը «Հայոց նոր վկաները» գիտական հրատարակության էջերում ընդգրկել են Անդրեաս քահանայի վկայաբանությունը՝ հիմք ընդունելով Առաքել Դավրիժեցու «Պատմության» Իէ գլուխը։ Սրանց հայտնի են եղել նաև Մատենադարանի № 1501 (էջ 165ա—167ա) և № 1534 (էջ 173բ—175ա) «Յայսմաւուրքների» ընդօրինակությունները, որոնք ծագում են Առաքել Դավրիժեցու «Պատմության» նշված գլխից։

Անդրեաս Ագուլեցու կամ Նախիջևանցու նահատակությանը տարբեր առիթներով (բոլոր դեպքերում հիմք ունենալով միայն Դավրիժեցու «Պատմությունը») անդրադարձել են Մ. Չամչյանը, Ղ. Ալիշանը, Լեոն, Հ. Աճառյանը, Հ. Մանանդյանը, Մ. Օրմանյանը. Մ. Աբեղյանը, Ն. Ակինյանը, Հ. Անասյանը և ուրիշներ։ Այս նույն Անդրեաս երեցին է նվիրված նաև Մուրացանի համանուն պատմական վիպակը։ Նշված բանասերներին, ինչպես և Մուրացանին, հայտնի չի եղել № 784 ձեռագրի վկայաբանությունը։

Արդ հարց է ծագում՝ ե՞րբ է հեղինակվել խնդրո առարկա վկայաբանությունը և ո՞վ է նրա հեղինակ Դավիթ եպիսկոպոսը։

Նորահայտ վկայաբանության մեջ թեև պատմվում է Մովսես Տաթևացու և Պողոս Մոկացու մասին, բայց խոսք չկա ո՛չ Մովսես Տաթևացու գործունեության արարատյան և առհասարակ կաթողիկոսական շրջանի վերաբերյալ և ո՛չ էլ նրա գործընկեր Պողոս Մոկացու ասպարեզից հեռանալու մասին. իրողություններ, որոնք տեղի են ունեցել 1619—1620 թթ. հետո։ Հետևաբար, գործը գրվել է այդ թվականներից առաջ, այսինքն Անդրեասի նահատակությունից անմիջապես հետո կամ մինչև 1620 թ.։ Այս կարծիքի օգտին է նաև հետևյալը։ Վկայաբանության հեղինակը, լինելով ներկայացրած իրողություններին ու անձանց ժամանակակից և ականատես, խուսափել է Մովսես Տաթևացուն և Պողոս Մոկացուն հալածողների մասին հականե-հանվանե խոսելուց։ Նա այդ մասին գրում է. «Զարախաւսքն ասացին, թէ ոչ է դմա մեղ, այլ ուսուցիչ զոյ դմա։ Եւ հարցեալ թագաւորին, թե՝ ո՞վ է կամ ուստի՞։ Ասացին, թէ վարդապետ է, բնակութիւնն Տաթև է։ Յառաջագոյ չարախաւսութիւն մի այլ լուեալ էր թագաւորն ի վարդապետէն ի սուտ եղբարց, ի սուտ ընկերաց»[1]։

Առաքել Դավրիժեցին Մովսես Տաթևացուն և Պողոս Մոկացուն չարախոսողների անունները որոշակիորեն նշում է, նկատի ունենալով Մելքիսեդեկ կաթողիկոսին և նրա եղբորորդի Սահակ եպիսկոպոս Դառնեցուն։

Իմանալու համար, թե ո՞վ է նորահայտ վկայաբանության հեղինակ Դավիթ եպիսկոպոսը, դիմենք հետևյալ փաստերի քննությանը։ Մովսես Տաթևացուն համարելով իր հոգևոր հայրը և ուսուցիչը, նա իր մասին հայտնում է. «Եւ ես՝ եղկելի, նուաստ Դաւիթ եպիսկոպոսս, հոգոյ ակամբս կուրացեալ և խաւարեալ մարմնոյ ակամբս, ականատես եղեալ, վասն իմ ագահութեան և փառասիրութեան և ոչ ըստ Աստուծոյ, և ընդ նոսա (իմա՛ Մովսես Տաթևացու և Պողոս Մոկացու—Գ. Ս.) շրջելով, զպարտսն վճարելով, զրեցի զՊատմութիւնս ոչ թէ կատարելապէս, այլ մի ի հաղարաց առեալ։ Մի զարմանայք հայրք և եղբարք և հոգևոր որդիք մեր, կամ և մեղադրէք, թէ ասացի, թէ բազումս ցանկային տեսութեանց սոցա»[2]։

Անդրադառնալով XVII դարի սկզբի մշակույթի ռահվիրաների գործունեությանը, Առաքել Դավրիժեցին նշում է այն անձանց անունները, որոնք Սյունյաց Մեծ անապատում Սարգսի, Կիրակոսի և Մովսես Տաթևացու մոտ ուսում ստանալով, յուրաքանչյուրն իր հերթին, Հայաստանի տարբեր կողմերում ծավալել են լուսավորական գործունեություն. «Ը վերայ բարի համբաւոյ նոցա եկին բազումք և յարեցան ի նոսա և եղեն նոցա միաբանք և բնակիչք տեղւոյն. ոչ միայն աշխարհականք և աննշանք, այլև եկեղեցականք և անուանի արք, վարդապետք, եպիսկոպոսք և քահանայք»[3]։

Եվ, ահա, դրանց շարքում էլ հիշատակված է մի Դավիթ եպիսկոպոս, որը կոչվել է Շամխորեցի. «Եւ Դաւիթ եպիսկոպոսն, որ ի Շամքօրու ձորէն և ի ցեղէ իշխանաց, զոր Հարամանենց կոչեն, սա ևս եկեալ եկաց ի Մեծ անապատս և ապա ելեալ գնաց ի ձորն Շամքօրու և անդ շինեաց անապատ, զոր կոչեն Զարեքագետի անապատ, որ և բազմաժողով եղբարց բնակութիւն և յոյժ հաստատուն ամենայն կարգօք և սահմանօք անապատի մինչև ցայսօր,

1 Ն՛աշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 784, էջ 383բ։
2 Նույն տեղում, էջ 384բ։
3 Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896, էջ 253։

և ինքն Դաւիթ եպիսկոպոսն անդէն վախճանեցաւ և անդէն թաղեցաւ»[4]։ Ուրեմն Մովսես Տաթևացուն իր ուսուցիչը համարող վկայաբանության հեղինակ Դավիթ եպիսկոպոսը նույն ինքը Դավիթ եպիսկոպոս Շամխորեցին է, որն աշակերտել է Մովսես Տաթևացուն։ Տարօրինակ չպետք է թվա, որ նորահայտ վկայաբանության մեջ Դավիթ Շամխորեցին իրեն կոչում է լոկ «Դաւիթ եպիսկոպոս»։ Տարբեր տեղեր հանդիպում ենք նրա անվան հիշատակությանը այդ նույն ձևով, երբեմն ուրիշների կողմից, երբեմն էլ՝ իր։

1637 թ. մի հիշատակարանում գրված է. «Ես՝ Արիստակէս վարդապետս, Տէր Յակոբս, տէր Բարսեղս վաճառեցաք զայս գիրքս Զարեքայ անապատին Դաւիթ պարոնտէրն, տէր Խաչատուրն, տէր Անտոնին և այլ միաբանիցն ի թվին ՌՁՋ (1637)-ին, մի ոք հակառակութիւն արասցէ... Ես՝ Դաւիթ Եպիսկոպոս և իմ միաբանքս ըստացաք զայս գիրք Մեծ անապատէն Արիստակէս վարդապետէն»[5]։ Մարգիս կրոնավորը 1641 թ. Ավետարան է նորոգել «ի սուրբ անապատս Զարեքայ և առաջնորդութեամբ սուրբ ուխտիս Դաւիթ եպիսկոպոսի»[6]։ Ղարամանենցն իր տապանագրում նույնպես կոչված է Դավիթ եպիսկոպոս. «Այս է հանգիստ Դաւիթ Եպիսկոպոսին, թուին ՌՂԲ (1643)»[7]։

Ն. Ակինյանը Մովսես Տաթևացու կյանքին ու գործունեությանը նվիրված մանրակրկիտ ու ծավալուն ուսումնասիրության մեջ գրում է. «Մովսէս վերադարձաւ Սիսական աշխարհը 1613-ին։ Հոն Տաթևի շրջակայքը՝ Եղինդևան գիւղի մեջ գտաւ իր Երուսաղեմէն ծանօթ ազնաւորները՝ Մարգիս և Կիրակոս.... ըստ նախկին ուխտադրութեանն իրեանց, զոր պայմանեալք էին յՍրուսաղէմ, և անդէն յԱնապատի կալաւ իր դադար բնակութեան»[8]։ Անդրեաս քահանայի նահատակության առիթով, Մովսես Տաթևացին և նրա գործընկեր Պողոս Մոկացին հալածվեցին Շահ Աբաս I-ի կողմից մինչև որ 1619—1620 թթ. վերջնականապես հեռացան Սյունյաց Մեծ անապատից։ Հետևաբար, Դավիթ Ղարամանենց Շամխորեցին Սյունյաց Մեծ անապատում 1613—1617 թթ. էլ ունկնդրել է Մովսես Տաթևացուն։

Առաքել Դավրիժեցու «Պատմության» Իէ գլխի համեմատությամբ՝ նկատելի տարբերություններ կան նորահայտ վկայաբանության մեջ։ Այդ տարբերությունները կարելի է բաժանել երկու խմբի. առաջին՝ փաստական կարգի տարբերություններ և երկրորդ՝ երկում ներկայացված իրողություններից բխող հեղինակային խոհեր ու եզրահանգումներ։

Առաջին կարգի տարբերություններից են հետևյալները. Անդրեաս Ագուլեցու աշակերտների թվի մասին Դավրիժեցին գրում է. «Ժողովեցան մանկունք յիսուն կամ վաթսուն», իսկ Դավիթ եպիսկոպոսը որոշակիորեն նշում է. «Երկու վարդապետք աստուածակուս կողմանէ ետ մեզ Աստուած՝ Մովսէս և Պողոս, որ խիստ յաւժար և փափագէին յեկեղեցի շինելն, դպրատուն հաստատելն և ուսուցանէին ըստ նմանութեան առաջնոցն... Եւ հոգևոր հայրն իմ՝ տէր Մովսէս վարդապետն, ի յԱգուլիս դպրատուն հաստատեաց Ծ և Ե այլ աւելի մանկունք կու կարդային, և նոցա ուսուցանողն տէր Անդրէաս պատուական

---

4 Նույն տեղում, էջ 253—254։

5 Ն. Ակինյան, Մովսէս Գ Տաթևացի, Վիեննա, 1936, էջ 161։

6 Մ. Բարխուդարյանց, Արցախ, Բարու, 1895, էջ 144։ Հ. Թոփչյան; Ցուցակ ձեռագրաց, Բ, Վաղարշապատ, 1898, էջ 46։

7 Ս. Ջալալյանց, Ճանապարհորդություն, Ա, Տփղիս, 1842, էջ 166։

8 Ն. Ակինյան, նշվ. աշխ., էջ 24—25։

քահանայն տղայ հասակաւ, որ զնոսա կու դաստիարակէր խնամօք և փափագանօք»[9]։

Առաքել Դավրիժեցին Անդրեասի նահատակության օրը չի նշում, իսկ մեր հեղինակը ականատեսի հիշողությամբ գրում է. «Եւ ծակեալ զպճղանս ոտից երանելոյն և կախեցին զգլխիվայր. մինչև մուտս արևու կենդանի կայր ի կախաղանին և խաչակնքելոյ զդեմ ոչ դադարէր։ Կատարեցաւ սուրբ քահանայն Անդրէաս թվին ՌԿԶ (1617) տրէ Ժ և նոյեմբեր ԺԸ, պատկեր աւրն կիրակի, յիսնակամտի բարիկենդանին»[10]։ Այստեղ պետք է հասկանալ շաբաթ օրվա երեկոյան, երբ սկսվում է հաջորդ օրը, համաձայն տոմարական հնուց եկող հաշվումների։

Նորահայտ վկայաբանության մեջ կան Մովսես Տաթևացուն և Պողոս Մոկացուն վերաբերող մանրամասնություններ։ Այսպես. Մովսես Տաթևացուն և Պողոս Մոկացուն Շահ Աբաս I-ը կալանավորում և երեսունվեց օր շղթայակապ պահում է բանտում, որտեղից նրանք ազատվում են փրկագնով. «Յայնժամ սրտմտեցաւ թագաւորն, առաքեաց և ըմբռնեաց զտէր Մովսէս Վարդապետն և զտէր Պողոս վարդապետն, եդեալ ի կոճեղս զձեռս ընդ պարանոցին, սաստկասառոյց եղանակաւ ի ժամանակս ձմեռնային և ի կապանս կրկին շղթայիւք... Եւ ես՝ եղկելի, նուաստ Դաւիթ եպիսկոպոսս... ընդ նոսա շրջելով զպարտս վճարելով, գրեցի զՊատմութիւնս»[11]։

Դավիթ եպիսկոպոսը վկայաբանության վերջում նշում է «տասը պատճառներ», որոնք փաստորեն ամփոփում են պատմված իրադարձությունների շուրջ հեղինակի մտորումներն ու խոհերը։

Առկա փաստերի քննությամբ պարզվում է, որ Անդրեաս Ագուլեցու նահատակությունից (1617) շատ չանցած ստեղծվել է նրա վկայաբանությունը, որի հեղինակն է Դավիթ Ղարամանենց Շամխորեցին։ Ղարամանենցը Սյունյաց Մեծ անապատում Մովսես Տաթևացու և այլոց ջանքերով 1613—1617 թթ. նախապատրաստվել է լուսավորական-հասարակական գործունեության, այնուհետև մասնակցել է իր ժամանակի պատմական անցուդարձերին (1617—1619), հիմնել է Շամխորի Ջարեքագետի անապատը։ Նրա հեղինակած վկայաբանությունը, լինելով դեպքերին ականատես անձի շարադրանք, առավել կարևորություն ունի։ Այն աղբյուր է ծառայել Դավրիժեցու «Պատմության» համար։

«МУЧЕНИЧЕСТВО АНДРЕАСА АГУЛЕЦИ» И ЕГО АВТОР

К. О. СУКИАСЯН

(Резюме)

В статье описывается обнаруженное в рукописи Матенадаранг № 784 «Мученичество Андреаса Агулеци» и выясняются вопросы, связанные с автором этого произведения, а также с обстоятельствами его создания во втором десятилетии XVII в. Отмечается, что данное произведение содержит интересные сведения о тяжелом положении армянского народа, находившегося в то время под персидским игом.

9 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 784, էջ 383ա։

10 Նույն տեղում, էջ 384ա։

11 Նույն տեղում, էջ 384գ—384բ։